Արձանագրություն 3

Տաշիր համայնքում 2025թ.-ին ստեղծված մասնակցային բյուջետավորման գործընթացի կառավարման հանձնաժողովի առաջարկների ներկայացման փուլի արդյունքների նիստի

Ք. Տաշիր
16/06/2025թ., 15:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝
Նաթելլա Մուրադյանը - Համայնքապետարանի աշխատակազմի Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ,
Հանձնաժողովի անդամներ՝
Ասյա Հարությունյան - Համայնքապետարանի աշխատակազմի Սոցիալական աջակցության, առողջապահության, սպորտի, մշակույթի, երիտասարդության և կրթության բաժնի պետ,
Սևադա Սարգսյան - Համայնքի ղեկավարի խորհրդական,
Համայնքի ակտիվ բնակիչ՝
Ինեսսա Խանադյան
Հանձնաժողովի քարտուղար՝
Աստղիկ Բարոյան - Համայնքապետարանի աշխատակազմի Զարգացման ծրագրերի, առևտրի, սպասարկման, գովազդի և տուրիզմի բաժնի առաջատար մասնագետ

Օրակարգ

Տաշիր համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի շրջանակներում առաջարկների ներկայացման փուլի արդյունքների ավարտի ամփոփում:

Լսեցին՝
1.Հանձնաժողովի նախագահի տեղակալ Նաթելլա Մուրադյանին՝
-ողջունեց հանձնաժողովի անդամներին, ներկայացրեց հավաքագրված և ամփոփված առաջարկները: Հանձնաժողովը իրականացրեց առաջարկների

նախնական գնահատում: Արձանագրեց առաջարկների ներկայացման փուլի ավարտը:

-Ներկայացրեց ստացված առաջարկները:

Առաջարկեց նաև առաջարկված հայտերը ևս մեկ անգամ դիտարկել՝ վերանայելով սահմանված չափորոշիչները:

Լսելով հանձնաժողովի նախագահի տեղակալի ներկայացրած տեղեկատվությունը, քննարկելով հետագա անելիքները, Տաշիր համայնքի մասնակցային բյուջետավորման գործընթացի կառավարման հանձնաժողովը

ՈՐՈՇԵՑ

1. Մասնակցային բյուջետավորման գործընթացի առաջարկների ներկայացման փուլի համարել ավարտված՝ դրական արդյունքներով,

2. Սկսել հանրային քննարկումների և լսումների փուլը՝ ժամկետը նշանակելով սույն թվականի հունիսի 16-ից մինչև հուլիսի 4-ը:

Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Ն. Մուրադյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Բարոյան